VTB

№ 26-120

№ 26.06.2026թ.

Հավելված 2
«ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/100»* ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N Ճ447Ի1015**

**1.Սույն Երաշխիքը, ինչպես նաև սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում են ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/100 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ՄՈՆԹԵ ԿՈՐՊՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00490235) (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:**

**2. Երաշխիքով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն (ՀՀ ք. Երևան Մանանդյան փ. 33/3) (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի ՀՀ Ֆն գործառնական վարչություն 900415151442 հաշվեհամարին փոխանցման միջոցով:**

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում թողարկման պահից և ուժի մեջ է Բենեֆիցիարի կողմից ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/100 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված առնվազն 90 (իննսուն) աշխատանքային օր, բայց ոչ ուշ քան 06.11.2026թ ներառյալ: Սույն Երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ Երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն Երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ ghazaryan.zaruhi@list.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ք. Երևան, Մանանդյան 33/3 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և Երաշխիքի բնօրինակը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի Մյասնիկյան մ/ճ-ի կառավարիչ՝ Գ. Էքսերջյան

2606.2026

ամիսը, ամսաթիվը, տարեթիվը